ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2017 թվականի N 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 78-ում «Առաքելյան Աիդա» բառերը փոխարինել «Սահակյան Ծաղիկ» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի գրությունը, ծնողական խորհրդի 2017 թվականի հունիսի 13-ի թիվ 4 նիստի արձանագրության քաղվածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2017թ. հունիսի 15
ք. Կապան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
«ԱՇՈՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

<< Սյունիքի մարզ գ.Աշոտավան, Հեռ. (098)585848,ashotavan @ schools.am

«14»«06» 2017 թ. Եկիզ N98

ՀՀ Սյունիքի մարզպետ
պարոն Վ. Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան

Սյունիքի մարզի <<Աշոտավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դպրոցական խորհրդի կազմում կատարվել է հետևյալ փոփոխությունը:

Խորհրդի՝ ծնողական խորհրդի կողմից ընտրված անդամ Աիդա Առաքելյանի երեխան տեղափոխվել է այլ դպրոց ուսումը շարունակելու նպատակով:

Դպրոցի ծնողական խորհրդի 13.06.2017 թ-ի կայացած N 4 նիստում խորհրդի նոր անդամ է ընտրվել Ծաղիկ Սահակյանը (կից ներկայացվում է արձանագրության քաղվածքը):

Ելնելով վերոգրյալից՝ խնդրվում է հաստատել խորհրդի կազմում կատարված փոփոխությունը:

<<Աշոտավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի
դպրոցական խորհրդի նախագահ՝ Ա. Գրիգորյան

Քաղվածք

Աշոտավանի միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի թիվ 4 արձանագրությունից

Նախագահությամբ՝ Ծ. Սահակյանի

Քարտուղարությամբ՝ Մ. Ասլանյանի

Կայացած՝13.06.2017թ.

Օրակարգում.
Դպրոցական խորհրդի անդամի ընտրություն

Արտահայտվեցին՝ Հ. Դիլանյանը, Ռ. Նազարյանը, Ա. Ավանեսյանը

Առաջադրվեցին թեկնածուներ 1. Ծաղիկ Սահակյան, 2. Ռուզան Նազարյան

Տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, և արդյունքները հետևյալն են՝

1. Ծ. Սահակյան 8կողմ, 0 դեմ

2. Ռ. Նազարյան 1 կողմ, 0 դեմ

Որոշեցին.

1.Առավելագույն ձայներ հավաքած թեկնածու Ծաղիկ Սահակյանին համարել ընտրված դպրոցական խորհրդի անդամ:

2. Դիմել Սյունիքի մարզպետին՝ <<Աշոտավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի խորհրդի կազմում կատարված փոփոխությունը հաստատելու:

Նախագահ՝ Ծ. Սահակյան

Քարտուղար՝ Մ. Ասլանյանի